

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

23.11.2015

«Հայաստանի վայրի ծառերը» շրջանառու հիշատակային մետաղադրամների վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Հայաստանի վայրի ծառերը» շրջանառու հիշատակային մետաղադրամների շարքը Արժույթային հարցերով միջազգային ասոցիացիայի կողմից Մադրիդում կազմակերպված միջազգային դրամագիտական մրցույթում արժանացել է պատվավոր մրցանակի «Լավագույն հիշատակային շրջանառու մետաղադրամ - 2015» անվանակարգում:

«Հայաստանի վայրի ծառերը» շարքը բաղկացած է 6 տեսակի մետաղադրամներից՝ «Սոսի», «Ուռենի», «Սոճի», «Կաղնի», «Բարդի», «Հաճարենի»: Մետաղադրամների դիմերեսին պատկերված է յուրաքանչյուր ծառի ընձյուղը: Դարձերեսին պատկերված է անվանական արժեքը՝ «200 դրամ» և զարդանախշեր: Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրդինյանը:

«Հայաստանի վայրի ծառերը» շրջանառու հիշատակային մետաղադրամների շարքը հատվել է Սլովակիայի դրամահատարանում և շրջանառության մեջ է դրվել 2014 թ. դեկտեմբերի 29-ին:

Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

հեռ/ֆաքս. 56 37 61

էլ-փոստ. mcba@cba.am

www.cba.am